Վայոց Ձորի մարզպետարան
մարզպետ՝ Տրդատ Սարգսյանին

«Վելես» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ՝
Դավիթ Գյուրջյանից
Հասցե՝ ք.Երևան, Նալբանդյան 5, 22ա սենյակ

22.10.2018թ.

Հարցում

Հարգելի պարոն Սարգսյան,
Ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասով՝ վստահորդիս իրավաբանական օգնություն ցույց տալու նպատակով, խնդրում եմ տրամադրել հետևյալ տեղեկատվությունն ու փաստաթղթերը.

1. Արդյո՞ք մարզպետարանի աշխատակազմում ապահովվում է (ողջ անձնակազմի իմաստով) սեռական ներառականությունը, հատկապես՝ աշխատակազմում արական և իգական սեռի ներկայացուցիչների հավասար ներգրավվածության ապահովման տեսանկյունից:
   1.1. Արդյո՞ք մարզպետարանն ունի ներքին կամ գերատեսչական մակարդակով գործող իրավական ակտ, որը (կամ դրա որոշ դրույթներ) միտված է ապահովելու աշխատակազմում կանանց և տղամարդկանց հավասար ներգրավվածությունը, եթե այո, ապա խնդրում ենք նշել դրա անվանումն ու հայտնել համացանցային ռեսուրսը, որից հնարավոր է այն ներբեռնել կամ տրամադրել այդ իրավական ակտը թղթային տարբերակով:
   1.2. Մարզպետարանի աշխատակազմում որքան է՞ կազմում կանանց և տղամարդկանց ներգրավվածությունը (տոկոսային հարաբերակցությամբ և թվային ցուցանիշներով):

2. Արդյո՞ք մարզպետարանի աշխատակազմում ապահովվում է սահմանափակ կարողություններով անձանց ներգրավվածության հնարավորությունը:
   2.1. Արդյո՞ք մարզպետարանն ունի ներքին կամ գերատեսչական մակարդակով գործող իրավական ակտ, որը (կամ դրա որոշ դրույթներ) միտված է ապահովելու աշխատակազմում սահմանափակ կարողություններով անձանց ներգրավվածության հնարավորությունը, եթե այո, ապա խնդրում ենք նշել դրա անվանումն ու հայտնել համացանցային ռեսուրսը, որից հնարավոր է այն ներբեռնել կամ տրամադրել այդ իրավական ակտը թղթային տարբերակով:
   2.2. Արդյոք պետական կամ մասնավոր աջակցությամբ, ծրագրերի միջոցով երբևէ նախաձեռնվել է մարզպետարանի աշխատակազմում սահմանափակ ունակություններով անձանց ներգրավումը:

Հ. Հ. ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
Մուտքի թիվ 6116
31 10 2018թ.

2.3. Մարզպետարանի աշխատակազմում որքան է՞ կազմում սահմանափակ կարողություններով անձանց թիվը:

3. Արդյո՞ք մարզպետարանի աշխատակազմում ապահովվում է ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների ներառականությունը, հատկապես՝ աշխատակազմում ՀՀ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների ներգրավվածության ապահովման տեսանկյունից:

3.1. Արդյո՞ք մարզպետարանն ունի ներքին կամ գերատեսչական մակարդակով գործող իրավական ակտ, որը (կամ դրա որոշ դրույթներ) միտված է ապահովելու աշխատակազմում ՀՀ հիմնական (մեծաքանակ) ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների ներգրավվածությունը, եթե այո, ապա խնդրում ենք նշել դրա անվանումն ու հայտնել համացանցային ռեսուրսը, որից հնարավոր է այն ներբեռնել կամ տրամադրել այդ իրավական ակտը թղթային տարբերակով:

3.2. Մարզպետարանի աշխատակազմում որքան է՞ կազմում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների ներգրավվածությունը թվային ցուցանիշով:

4. Արդյո՞ք մարզպետարանի աշխատակազմում ապահովվում է ազգությամբ հայ, սակայն այլ երկրի քաղաքացի հանդիսացող՝ հայկական սփյուռքի ներկայացուցիչների ներառականությունը, հատկապես՝ աշխատակազմում վերջիններիս ներգրավվածության համար հավասար պայմանների ապահովման տեսանկյունից:

4.1. Արդյո՞ք մարզպետարանն ունի ներքին կամ գերատեսչական մակարդակով գործող իրավական ակտ, որը (կամ դրա որոշ դրույթներ) միտված է ապահովելու աշխատակազմում հայկական սփյուռքի ներկայացուցիչների ներգրավվածությունը, եթե այո, ապա խնդրում ենք նշել դրա անվանումն ու հայտնել համացանցային ռեսուրսը, որից հնարավոր է այն ներբեռնել կամ տրամադրել այդ իրավական ակտը թղթային տարբերակով:

4.2. Մարզպետարանի աշխատակազմում որքան է՞ կազմում հայկական սփյուռքի ներկայացուցիչների ներգրավվածությունը թվային ցուցանիշով:

Կից ներկայացվում են.

1. «Վելես» հասարակական կազմակերպության կողմից Դ.Գյուրջյանին տրված լիազորագիրը.
2. Դավիթ Գյուրջյանի փաստաբանական գործունեության արտոնագրի պատճենը:

«Վելես» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ՝

Դավիթ Գյուրջյան

ԼԻԱԶՈՐԱԳԻՐ

ՀՀ, ք.Երևան 22.10.2018թ.

Ես՝ Մարինա Հրանտի Պողոսյանս
Անձնագիր՝ Անձնագիր՝ AS0288999, տրված 25.07.2018թ., 004-ի կողմից
Հասցե՝ ք.Երևան, Դեմիրճյան փ. 12-14շ., 36 բն.

Հանդիսանալով «Վելես» հասարակական կազմակերպության (գրանցման համար՝ 211.171.799455, ՀՎՀՀ՝ 02625373) նախագահ՝

Լիազորում եմ ՀՀ փաստաբանների պալատի անդամ, փաստաբան Դավիթ Գեորգիի Գյուրջյանին (փաստ. գործ. արտոնագիր՝ 1897)
Ծանուցման հասցե՝ ք. Երևան, Նալբանդյան 5, 22 ա սենյակ

Կազմակերպության անունից հանդես գալ բոլոր պետական մարմիններում, պետական և ոչ պետական կազմակերպություններում, ներկայացնել կազմակերպությունը նշված մարմինների և կազմակերպությունների հետ հարաբերություններում:

Կազմակերպության անունից ներկայացնել դիմումներ, կատարել հարցումներ, ստանալ և ետ պահանջել անհրաժեշտ փաստաթղթեր պետական մարմիններում, պետական և ոչ պետական կազմակերպություններում:

Լիազորագիրը տրվում է մեկ տարի ժամկետով:

Լիազորող՝ Մարինա Պողոսյան
Անուն, ազգանուն, ստորագրություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ

ПАЛАТА АДВОКАТОВ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

CHAMBER OF ADVOCATES
OF THE REPUBLIC OF ARMENIA

Փաստաբանական գործունեության
Արտոնագիր № 1897

ԴԱՎԻԹ ԳՅՈՒՐՋՅԱՆ

Лицензия № 1897
на право адвокатской деятельности

ДАВИД ГЮРДЖЯН

License № 1897
of advocate's activity

DAVIT GYURJYAN

Նախագահ՝
Председатель
Chairman

Արա Զոհրաբյան
Ара Зограбян
Ara Zohrabyan

81